ՏՕՆԱԾԻՍԱԿԱՆ ՇՐՋԱՅՑ-ԽԱՂԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Ակնարկ)

ՇՈՒՇԱՆԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ (shushanikhovhannisyan3@gmail.com)

ՄՈՒՏՔ

Տօնածիսական համակարգի բաղկացուցիչ լինելով՝ տօնածիսական խաղերը երբեմն հանդիսանում են գաղտնագրեր եւ ինքնին շատ բան կարող են ասել տօնի մասին: Իւրաքանչիւր տօն առանձնանում է իրեն յատուկ խաղերով ու զուարճութիւններով: Տօնական օրերին խաղացւում էին խաղեր, որոնք կարող էին խաղացուել նաեւ տարուայ այլ օրերին, եւ խաղեր, որոնք ունէին ուրոյն նշանակութիւն, պարունակում էին ծիսական տարրեր, եւ կարելի է ասել՝ հենց ծէս էին: Նման խաղերն իրենց ծագմամբ, նշանակութեամբ եւ կենցաղավարմամբ ունէին ծիսակարգային բնոյթ եւ տօնից դուրս կենսունակ չէին:

Այստեղ, ըստ ազգագրական եւ բանահիւսական տպագիր աղբիւրների, կը փորձենք պարզաբանել եւ իմի բերել հայ ժողովրդական տօնածիսական խաղերի առանձնայատկութիւններն ու նմանութիւնները, որոնք յստակեցնում են տօնական շրջանի իմաստային շղթան եւ ժողովրդական տօների միմեանց հետ ունեցած փոխառնչութիւնները: Քանի որ հայ ժողովրդական տօնածիսական շրջայց-խաղերի հիմնական գաղափարները արտայայտուել են խաղերգերում՝ խաղի գրոյթում (տեքստ), ուստի յօդուածում հիմնական անդրադարձը կը վերաբերի ԺԹ.-Ի. դարերի հայ ժողովրդական խաղերգերին:

Խաղերի խորհրդաբանութիւնը աւելի յստակեցնելու նպատակով յօդուածում նաեւ համեմատական անդրադարձ կը կատարենք հայ ժողովրդական հաւատալիքներին:

ՏՕՆԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԾԻՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Խաղի ու ծէսի տարանջատման հարցը իր վրայ է սեւեռել մշակոյթի, տեսաբանների, ազգագրագէտների եւ այլ գիտաճիւղերի հետազօտողների ուշադրութիւնը: Հետազօտողների մի մասը ծիսախաղերը համարում է նախնադարեան հասարակարգին բնորոշ կրօնական, ծիսական գործողութիւնների վերապրուկներ: Այդ ծէսերը ժամանակի պտոյտում մարդկանց յիշողութիւնից ջնջուել են, աւանդական գործողութիւնները վերածուել տօնական ժամանցի, խաղի[1]: Սակայն հնարաւոր է՝ հենց այս խաղա-

[1] *Календарные обычаи и обряды в странах зарубежной Европы. Исторические корни и развитие обычаев*, (Օրացուցային սովորութիւններն ու ծէսերը արտասահմանեան Եւրոպայի երկրներում. սովորոյթների պատմական արմատները եւ զարգացումը), պատ. խմբ.՝ Ս. Տոկարեւ, Մոսկուա, 1983, էջ 120-21:

յին դրսեւորումներով էլ ամրագրուել են մշակոյթում, քանի որ «*այն, ինչ փոփէմական, կրօնական ծէս էր նախնադարում, մեր ժամանակներում մեծ մասամբ խաղերի է վերածուած*»[2]: Հետազօտողների մէկ այլ տեսակէտ խաղը դիտարկում է իբրեւ հասարակական գործունէութեան բարդ, իսկ ծէսը աւելի պարզունակ ձեւ[3]:

Մարդկային գործունէութեան ձեւերի բարդ եւ պարզունակ բնորոշուած տեսակների ակնյայտ նմանութիւնը հիմնականում պայմանաւորուած է նրանով, որ երկուսն էլ կայուն կամ «բիւրեղացուած», կրկնուող, անփոփոխ, կանոնակարգուած գործողութիւններ են: Գործունէութեան այս երկու ձեւերը առօրեայից բաժանում եւ առանձնայատուկ են դարձնում նոյնանուն գործող կանոնները. ծիսակատարութեան մասնակիցները հետեւորդներ են, ովքեր պէտք է հաւատարիմ մնան սահմանուած կարգին, իսկ խաղերի մասնակիցները խաղացողներ են, ովքեր ամէն կերպ փորձում են հասնել խաղի նպատակին՝ յաղթել: Վերջինս աշխուժ գործողութիւն է (պահանջում է արագ արձագանգում ու կողմնորոշում)՝ ի տարբերութիւն ծէսի, որը հիմնականում կայուն է (պահանջում է հաւատարիմ մնալ սահմանուած գործողութիւններին)[4]:

Ծիսախաղերում ըստ էութեան մեծ դեր ունի բուն խաղերգերի գրոյթի բովանդակութիւնը: Քանի որ խաղերգերի կանոնաւոր գրոյթները խօսուն, յաճախ նաեւ քօղարկուած եղանակներով են արտայայտում գործողութիւնների տրամաբանութիւնը, բացայայտում ծիսախաղի բուն նպատակն ու էութիւնը, ինչպէս նաեւ խաղացողների սպասումները դրանից: Ծիսակատարութեան մէջ ծէսի եւ գրոյթի առաջնայնութիւնը քննելիս ֆրանսացի բանահաւաք, ազգագրագէտ Վան Գենէպը առաջնային է համարում գրոյթը՝ յաւելելով, որ ծէսը առասպելի դրամատիկ փոխանցումն է[5]: Հետեւելով այս մտքին, տեսնում ենք, որ խաղերում եւս մեծ իմաստը թաքնուած է հենց գրոյթում՝ խաղերգում կամ արտասանուող տողերում:

Հայ ժողովրդական տօնացոյցի խաղերին առհասարակ վերագրւում են ծիսական յատկանիշեր: Տօնածիսական խաղերում մեծ թիւ են կազմում նաեւ շրջայցի ձեւով կատարուող կանոնակարգուած խաղերը: Շրջայցխաղերը գլխաւորապէս տեղի էին ունենում տօնի նախորդ երեկոյին:

---

[2] Վ. Բդոյեան, *Հայ ժողովրդական խաղեր, հտր. 1*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1963, էջ 42:

[3] Э. Берн, *Игры, в которые играют люди* (Խաղերը, որոնք խաղում են մարդիկ), Պոպուրի հրատ., 1998, էջ 19-20:

[4] Evangelos Kyriakidis, “Rituals, Games and Learning, Ritual”, *Play and Belief, in Evolution and Early Human Societies*, Colin Renfrew, Iain Morley, Michael Boyd (eds.), Cambridge University Press, 2017, էջ 393:

[5] Арнольд ван Геннеп, *Обряды перехода. Систематическое изучение обрядов* (Անցումային ծէսեր. ծէսերի համակարգուած ուսումնասիրութիւն), ԳԱԱ, «Արեւելեան գրականութիւն» հրատ., Մոսկուա, 1999, էջ 189:

Շրջայց-խաղերի ժամանակ գիւղական կամ քաղաքային բնակավայրերում տնէտուն շրջող խումբը շնորհաւորական երգեր, հմայական խօսքեր եւ ծիսական մաղթանքներ հնչեցնելով՝ բերք ու բարիք էր խնդրում խօսքի ուժին հաւատացող համագիւղացիներից կամ համաքաղաքացիներից՝ փոխարէնը զօրեղ ուժերից խնդրելով բարօրութիւն՝ գալիք տարուայ համար: Նման խաղերը ունեն մի շարք ընդհանրութիւններ եւ առանձնայատկութիւններ, նախեւառաջ գաղափարական առումով:

Տօնակատարութիւնը իր զարգացման բոլոր փուլերում կապուած է եղել բնութեան, հասարակութեան ու մարդու կեանքում շրջադարձային պահերի հետ[6]: Յիրաւի, հայ ժողովրդական տօնացոյցը ուրուագծելիս՝ տեսանելի է կեանք-մահ-կեանք հերթագայութեամբ անպայմանօրէն անխախտ շղթայ: Տարուայ գարնանային-ամառային փուլի տօներում (Զատիկ, Ծաղկազարդ, Համբարձման տօն, Վարդավառ) կեանքն է, որը համապատասխանում է բնութեան երեւոյթների մահուան եւ յառնելու գաղափարին: Վերջինիս բնական իրագործումն արագացնելու համար ժողովուրդը միջամտում է այլեւայլ ծիսական-հմայական գործողութիւններով: Այս գործողութիւնները յաճախ իրականացւում էին խաղային եղանակներով: Տարուայ աշուն-ձմեռ շրջափուլում կատարուող ծիսահմայական գործողութիւններում տեսանելի է բնութեան աստիճանական նահանջը:

Օրացուցային ծէսերը բոլոր ժամանակներում եւ բոլոր ժողովուրդների մօտ գրեթէ միշտ վերաբերել են մեծ խմբերին եւ շատ յաճախ ընդգրկել են հասարակութիւնն ամբողջութեամբ: Դրանք կատարւում են տարեկան արտադրական փուլի յստակ նշուած ժամանակահատուածներում: Կայ տեսակէտ, թէ՝ օրացուցային ծէսերը եւս կարգավիճակի փոփոխութեան ծէսեր են՝ քանի որ պէտք է ապահովէին անցումը սակաւութիւնից առատութիւն, կամ հմայութիւններով պէտք է կանխարգելէին առատութիւնից սակաւութիւն անցումը[7]:

ՄԻՋՍԵՌԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հետազօտողները հաստատում են տարբեր ժողովուրդների մշակոյթում տօնական օրերին խաղացուող խաղերում երեւան եկող սեռային գործօնը: Ռուս բանահաւաք Պրոպպը տարուայ տօների ժամանակ կատարուող երկսեռ խաղերի բնոյթը նկարագրելիս շրջանառութեան մէջ է

---

[6] М. Бахтин, *Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса* (Ֆրանսուա Ռապլէի ստեղծագործութիւնը եւ միջնադարեան ու վերածննդի շրջանի ժողովրդական մշակոյթը), Գեղ. գրականութիւն հրատ., Մոսկուա, 1990, էջ 14:

[7] В. Тэрнер, *Символ и ритуал* (Խորհրդանիշ եւ ծէս), Գիտութիւն հրատ., Մոսկուա, 1983, էջ 233:

դրել «ծիսական էրոտիզմ» եզրը[8], ինչը որոշ դրուագներում, գուցէ ոչ-այդքան ցայտուն, որքան՝ եւրոպական կամ սլաւոնական ժողովուրդների խաղերում, տեսանելի է նաեւ հայկական խաղերում:

Խաղերի տեսաբան Եոհան Հայզինգան առանձնացրել է ծիսախաղերի շատ կարեւոր յատկանիշերից մէկը. «*Պատանիներն ու աղջիկները տարուայ եղանակների փօների ժամանակ ծիսակարգային ձեւերով հրապուրում են միմեանց փոխերգեցողութեան եւ խաղերի միջոցով*»[9]:

Մեծահասակների խաղերը բոլոր ժամանակներում ունեցել են սեռային տարրեր, սակայն միջնադարում եւ նրա վերջին՝ Վերածննդի շրջանում, դրանց սեռային բովանդակութիւնը հանդէս է գալիս միանգամայն բացայայտ կերպով: Նման խաղերի մեծամասնութեան բովանդակութիւնը երկու սեռի երիտասարդների՝ միմեանց սիրահետումը կամ մէկը միւսին փոխադարձ նուաճման գործընթացն է[10], որը հիմնականում տեղի է ունեցել ծիսակարգային ձեւերով՝ փոխերգեցողութեան եւ խաղերի միջոցով[11]:

Ծիսախաղերում սեռայնութիւնը կապւում է ոչ միայն սեռային պարզունակ պահանջմունքը բաւարարելուն, այլ նաեւ կրում է պտղաբերութեան, բերքի առատութիւնը բարձրացնելու, կենդանիների բեղմնաւորութեան եւ այլ նպատակներ: Այսինքն մի կողմից սեռայնութիւնը ունի «մաքուր տնտեսական գրծառոյթ»[12], միւս կողմից էլ «*պատանիների պարերը, խաղերը, զուարճութիւնները միանգամայն հասկանալի եւ բնական են, յատկապէս փօնական օրերին, առաւել եւս գարնանը*»[13]:

Ընդհանրապէս հայ ժողովրդական բոլոր խաղաձեւերում գոյութիւն ունէր սեռատարիքային յստակ սահմանազատում, ըստ որի առանձին են տղաների խաղերը աղջիկների խաղերից, տղամարդկանցը՝ կանանցից: Կարծրատիպային այս մօտեցումները իչիք էին դառնում տարուայ տօների համայնքային խաղերի ժամանակ:

Տօնական օրերին սեռերի փոխյարաբերութիւններում տեղի ունեցող այս շրջադարձը առաջ է բերում փոփոխութիւններ ընտանեկան դաշտում եւս: Բարեկենդանին տան կինը մէկ օրով արտօնութիւն էր ստանում տան տղամարդկանց «կանացի գործեր»՝ ման լուանալ, եփել, կարել եւ այլ

---

[8] Մանրամասն տե՛ս՝ В. Я. Пропп, *Русские аграрные праздники* (Ռուսական գիւղատնտեսական տօները), «Տերրա» հրատ., Ս. Պետերբուրգ, 1995, էջ 131:

[9] Եոհան Հայզինգա, *Homo Ludens, Մշակոյթի խաղային տարրերի սահմանման փորձ*, հրատ. «Սարգիս Խաչենց-Փրինթինֆո», Երեւան, 2007, էջ 82:

[10] Э. Фукс, *Иллюстрированная история нравов: Эпоха Ренессанса* (Բարքերի պատկերազարդ պատմութիւն. Վերածննդի դարաշրջան), Հանրապետութիւն հրատ., Մոսկուա, 1993, էջ 468:

[11] Հայզինգա, էջ 83:

[12] Токарев, էջ 99:

[13] Նոյն, էջ 99:

յանձնարարութիւններ տալու[14]: Իհարկէ, տօնական օրուան յաջորդիւ իր հետեւանքն ունենում էր: Օրինակ՝ Բարեկենդանի վերջին օրը ընտանիքի աւագ տղամարդուն մատուցում էին «պարան ու մտրակ»՝ ընտանիքի կարգը փոխած կանանց հնազանդեցնելու համար[15]:

Հայզինգան պարերգերում եւս տեսնում է խաղի յատկանիշեր. «...*երգերը խաղի փիպիկ արգասիք են՝ յստակ կանոններով, փոփոխակուող կրկնութեամբ, հարց ու պատասխանով*»[16]: Այս կերպ պար-խաղին հաղորդւում էր նաեւ թատերգային ձեւ՝ պար-խաղին մասնակցելու հրաւիրողներ եւ հրաւիրուողներ:

Հայկական ժողովրդական խաղերում սեռային տարրերի արտայայտման զուգահեռները կարելի է տեսնել հիմնականում բնութեան զարթօնքի փուլին համընթաց տօների ժամանակ՝ յատկապէս Համբարձման, Ծաղկազարդի եւ Վարդաւառի խաղերում, երբ երիտասարդները - յատկապէս աղջիկները - կարող էին արտայայտել իրենց զգացմունքները, երբեմն ուղղակի ձեւով, երբեմն էլ՝ քօղարկուած: Այդ խաղերից էին Համբարձման «Վիճակները», Ծաղկազարդի «Ճլորթի» խաղերը, ինչպէս եւ Վարդավառին տեղի ունեցող խաղերը: «Ճլորթի» խաղի Գանձակի տարբերակում երիտասարդները նստում էին ճօճին եւ մէկը տարուբերում ու ձողով հարուածում է ճօճին նստած երիտասարդին այնքան, մինչեւ վերջինս խոստովանում է թէ ում է համակրում[17]: Յիշենք նաեւ Զատկին կատարուող պարերգերից, որոնք տեղի էին ունենում տղաների եւ աղջիկների մրցակցող խմբերի միջեւ[18].

Մեր նանին ճղճղում ա՝ ա տղա, տիւ մի կյալ-կյալ,
Ձեր նանին ճղճղում ա՝ մին շամխի քթկալով կյամ-կյամ,
Մեր աղբիւրը կռռում ա՝ ա տղա, տիւ մի կյալ-կյալ,
Ձեր աղբիւրը կռռում ա՝ մին մղայի փափաղով կյամ-կյամ...

Կամ մէկ այլ օրինակ.

Սարերը ձինը կոխալ ա,
Քարհա, ես հու՞նց կյամ:
Սարերը ձինը կոխալ ա,
Կանաչ թըլով եկ:

---

[14] Ա. Օդաբաշեան, «Ամանորը հայ ժողովրդական տօնացոյցում», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հտր. 9*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 43:

[15] Հ. Խառատեան-Առաքելեան, *Հայ ժողովրդական տօները*, Զանգակ-97, Երեւան, 2005, էջ 306:

[16] Հայզինգա, էջ 85:

[17] Բդոյեան, էջ 235-236:

[18] Խառատեան-Առաքելեան, էջ 141, 143-45:

Վարդավառի գիշերը շարունակւում են երկու սեռերի միջեւ հակադիր խմբեր կազմած խաղերը՝ ուղեկցուելով երգ ու պարով միախառնուած խաղ-մրցոյթներով[19]:

Վարդավառը հասել ա,
Բան ու գործըս թարսել ա,
Թէ սիրել ես,
Ջուր շաղ տուր,
Կըրակս թէժացել ա[20]:

ԲՆԱՊԱՇՏԱԿԱՆ ՄՈՏԻՒՆԵՐ

Քննուող խաղերի ժամանակ բնութեան զարթօնքին, տնտեսական գործունէութեան մեկնարկը յաջող տալուն մեծ դեր է վերագրուել: Դրա հետեւանքով, հայ ժողովրդական խաղերում իրենց արտացոլումն են գտել բնութեան զարթօնքն արագացնող, երաշտը կանխող ժողովրդական բազմաթիւ հաւատալիքներ:

Վաղնջական հասարակութիւնում մարդիկ, փորձելով ազդեցութիւն ունենալ գերբնական ուժերի վրայ, ձգտել են երեւակայական կապ հաստատել նրանց (*տոտէմ*ների, *ֆետիշ*ների ու նախնիների) հետ: Այստեղ թերեւս պէտք է նկատի ունենալ նաեւ հայոց այն հին համոզմունքը, թէ բնութեան երեւոյթները, կենդանիները եւն. սկզբնապէս եւս մարդիկ են եղել[21]:

Հայ ժողովուրդը ժամանակի ընթացքում մշակել է բնութեան եւ հասարակական կեանքի երեւոյթների վրայ ներգործելու բազմազան հմայական գործողութիւններ, ծէսեր, որոնք նախաքրիստոնէական հայի հաւատալիքների արգասիքն են[22]: Այս երեւոյթն ակներեւ է նաեւ շատ խաղերգերում, որտեղ առկայ են բնապաշտական գծեր[23]: Սրանք սերտ կապ ունեն հողի, ջրի, երկնքի ու երկնային մարմինների պաշտամունքի մնացուկների հետ, որոնց միջոցով «… *մարդը իւրօրինակ երկխօսութեան մէջ է մտնում բնութեան հետ՝ նրա իւրաքանչիւր երեւոյթին պատասխանելով ծիսական համապատասխան արտայայտութեամբ, եւ ընդհակառակն, իր ծիսական գործողութիւններով բնութեան մէջ ձգտելով յարուցել պատասխան վերաբերմունք*»[24]: Բնապաշտական նմանօրինակ դրսեւորումները յատկապէս ընդգծուած են տարեշրջանի գարանանային-ամառային փուլում: Նախաքրիստոնեայ հայերը նշում էին ծաղիկների, բոյսերի, ջրերի, աստղերի

---

[19] Նոյն, էջ 206:

[20] Նոյն, էջ 209:

[21] Ս. Յարութիւնեան, *Հին հայոց հաւատալիքները, կրօնը, պաշտամունքն ու դիցարանը*, հրատ. Մուղնի, Երեւան, 2001, էջ 8:

[22] Գալուստ, «Ճակատագրի տօնը (Համբարձումը). վիճակ հանելու սովորութիւնը եւ վիճակի երգերը», *Արարատ ամսագիր*, Էջմիածին, 1908, էջ 916:

[23] Օդաբաշեան, էջ 29:

[24] Լ. Աբրահամեան, *Ծէսը, նախաթատրոնը եւ թատերական հրապարակը*, «Բեմ» հրատ., Երեւան, 1990, էջ 7:

«գարնանային մի փառահեղ տօն», որը աստիճանաբար քրիստոնէացուեց եւ դարձաւ Համբարձման տօնը[25]:

Բնապաշատութեան վկայութիւն են նաեւ խաղերում տանտէրերին օրհնող, նրանց տանը Աստծուց հիմնաւորապէս արեւշատութիւն, ջրի առատութիւն խնդրող հատուածները: Այսպիսի մի օրինակ է Շապին-Գարահիսարում կենցաղավարուած՝ երաշտի ժամանակ անձրեւ բերելու նպատակով կազմակերպուած «Ուշխուրուճի» շրջայց-խաղի ժամանակ արտասանուած հատուածը.

Ուշխուրուճին եկել է,
Շալէ շապիկ հագել է,
Կարմիր կովից իւղ կ'ուզէ,
Գունդուկ հաւից հաւկիթ կ'ուզէ.
Տու՛ր Աստուած,
Տուր եօթն օր,
Եօթը գիշեր,
Մատրաբազի ամբարին,
Աղքատների արտին[26]:

Յայտնի է, որ խոյը յիշատակւում է գարնանային ծէսերում՝ բուսականութեան աստուածութեան յարութեան կրօնադիցաբանական գաղափարի հիմքում: «*Այս կենդանու մերձաւորներն էլ՝ այծ, նոխազ, քաղ, քոշ, իրենց անունները լսելի են դարձնում շէն ու անշէն տեղերում՝ որպէս զոհ գործածուելով, եթէ աւելի կրօնական նշան չունեն, որպիսին ունեն դրանցից զուգուած կամ խառնուած մտացածին կենդանիները՝ վիշապաքաղը, եղջերուաքաղը եւն.*»[27]: Խոյի պաշտամունքը կապուած էր նաեւ նախնիների պաշտամունքի հետ[28]: Խոյի մասին նոյնպիսի ընկալումներ կային Եգիպտոսում, երբ գարնանային օրահաւասարից յետոյ մեծ ոգեւորութեամբ ընդունում էին խոյի տիրապետութեան ժամանակը եւ այս առիթով խոյին զարդարում էին ծաղիկներով եւ մեծ խմբով, հանդիսաւորութեամբ շրջեցնում:

Նոր տարին դիմաւորելիս ջրի ակունքին արուող գործողութեան ընթացքում ծիսահմայական երգը խօսուն է.

Ջրի բարին, ջրի մորին,
Անդնդային թագաւորին,
Ջուր կաղնդէ իս[29]:

---

[25] Գալուստ, էջ 916:

[26] Բդոյեան, էջ 163:

[27] Հայր Ղեւոնդ Ալիշան, *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց*, Վենետիկ-Ս.Ղազար, 1910, էջ 41:

[28] Э. Темкин, В. Эрман, *Мифы древней Индии* (Հին Հնդկաստանի առասպելները), Մոսկուա, 1985, էջ 49-50:

[29] Օդաբաշեան, էջ 58:

Ջրի պաշտամունքի մնացուկներից է այն երեւոյթը, երբ Վարդավառի «Խոյ շրջեցնելու», «Եզ շրջեցնելու» շրջայց-խաղերի ժամանակ, նոյն մոտեցմամբ, խոյի, այծի, խոզի գլուխը պտտեցնում էին, եւ ժողովուրդը անձրեւի ակնկալութեամբ ջուր էր լցնում կենդանու գլխի վրայ[30], խաղի ժամանակ հովիւները խոյ էին ներկում կարմիր գոյնով, ծաղիկներով եւ գոյնզգոյն կտորներով զարդարում եւ կրկին տնէտուն շրջում[31]:

«*Ջուրը թէ կեանք էր տալիս եւ թէ մահ ու կործանումն էր բերում իր հետ ... անբացատրելի ու ահռելի ուժ, որից կախում ունեն մարդն ու անասունն, երկիրն ու տեսանելի բնութիւնը*»[32]: Խաչիկ Սամուէլեանը նշում է, որ տոտէմիզմը աստիճանաբար վերածւում է սոսկ կենդանական պաշտամունքի, կենդանակերպ աստուածութեան[33]. այս դրսեւորումները հեթանոսական աշխարհից ներթափանցել են նաեւ քրիստոնէական ժողովրդի կրօնի ու հաւատալիքների մէջ:

Ըստ Ալիշանի՝ «*Հայք ցամաք երկրի բնակիչք, գետոց ակունքը կամ աղբիւրները սրբազաներ են ... եւ եթէ այն յիշեալ լեռնոտ կողմանց մանր գետակներն այլ պատուած են, ո՛րքան եւս առաւել մեծերն ... եւ պաշտամանց նշմար մ՚այլ, ինչպէս ուրիշ բաներու, անցեր է ի նոր եւ ի սուրբ կրօնս ազգայնոց, Վարդավառի հրաշափառ տօնին՝ ջրոյ ցողմունք ցրմունք եւ խաղեր ընելով...*»[34]: Խաղերում ջրի պաշտամունքի արտայայտման օրինակ է վարդավառեան «Չիչի-մամա» խմբերթը: Խաղը, որը երաշտի ժամանակ անձրեւ բերելու միտումով էր կազմակերպւում, ընթանում էր – ինչպէս բոլոր շրջերթ խաղերը - խաղերգերով, բանաձեւուած խօսքերով, մթերքի հաւաքմամբ, այն տարբերութեամբ, որ այստեղ առանցքային նպատակը անձրեւաբեր ուժերից անձրեւ եւ ջրի առատութիւն հայցելն էր: Խաղերգերի հարց-պատասխան երկխօսութեան ձեւաչափը պահպանելով՝ հնչում էր.

Չիչի-մաման ի՞նչ կ՚ուզէ, Երկնքէն ամպեր կուզէ:

Ապա լսւում էր պատասխանը.

Չիչի-մաման ի՞նչ կ՚ուզէ, Աստծու անձրեւ կ՚ուզէ...[35]:

Ամանորին դիմելով ջրային աստուածութեանը՝ մարդիկ խնդրում էին կախարդուած ջուր, արեւ, բարիքի առատութիւն, փոխարէնը զոհաբերում գարի, ցորեն եւն.[36], տանտէրերին ուղղուած գովաբանական խօսքերում

---

[30] Բդոյեան, էջ 165:

[31] Նոյն, էջ 166:

[32] Խ. Սամուէլեան, *Հին Հայաստանի կուլտուրան, հտր. 1*, Արմֆան հրատ., Երեւան, 1931, էջ 281:

[33] Նոյն, էջ 215:

[34] Ալիշան, էջ 59-60, 62:

[35] Բդոյեան, էջ 162:

[36] Լ. Սիմոնեան-Մելիքեան, *Տոմարային ծիսաշար, հտր. 1*, հրատ. «ՎՄՎ-պրինտ», Երեւան, 2006, էջ 101:

ամէնից յաճախ յիշատակւում են երկնային լուսատուները, յատկապէս արեգակը: Վանի խաղերգերից մէկում տանտէրերը համեմատւում են հենց արեգակի եւ իր հերթին աղերս ունի արեգակի պաշտամունքի հետ:

…Ձեր տունը շէն հետ արեւուն,
Արեւն էրկընններ ձեր տըղէյներուն,
Չարը զատ անէր, բարին մօտենէր…[37]

ՆԱԽՆԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Ծիսական խաղերում արտայայտութիւն է գտել նախնիների պաշտամունքը եւս: Նախնիների պաշտամունքի հետ է կապւում տանիքի վրայ բարձրանալը եւ երդիկից ամանի, գուլպայ, կամ դդում կախելը՝ զոհաբերութեան ակնկալիքով:

Գօտեկախի խաղերի վերաբերեալ կայ մեկնութիւն, ըստ որի տանիքը խորհրդանշում է վերին աշխարհը, երդիկը՝ վերին աշխարհը երկրի հետ կապող միջնորդող օղակը, իսկ գուլպայի կամ ամանի մէջ դրուող քաղցրեղէնը՝ զոհաբերութիւնը, մահացած ազգականներին իրենց բաժինն ուղարկելը[38]: Օրինակ բերենք հետեւեալ պատառիկը. «Կաղանդ կանչելու» խաղի ժամանակ Ակնի աղքատ երեխաները խմբերով շրջելիս եւ տներում երգով կաղանդ կանչելիս բաժին էին պահանջում նաեւ տանտէրերի նախնիների համար.

…Ասօր կախ է,
Առտուն կաղնոտ է,
Ձեր մեռելացը հոգուն տուէք…[39]:

Դրանով երեխաներն իրենց համարում են մեռեալ նախնիների հոգիներ կամ ներկայացուցիչներ եւ համապատասխան զոհաբերութիւն պահանջում, որպէսզի «կերակրեն» նրանց: Հաւանական է, որ երեխաների այս դերը ստանձնելը բացատրւում է այն հանգամանքով, որ ըստ հաւատալիքի երեխան ունակ էր հաւասարապէս շփուել ողջերի եւ մահացածների հետ, կարող էր նաեւ կապող լինել նրանց միջեւ[40]:

Ուշագրաւ է այն, որ բնագրում յատկապէս նշւում է ծիսախաղին մասնակից երեխաների ո՛ր դասին պատկանելը, քանի որ տօնական օրերին աղքատներին կերակրելը մահացածներին կերակրելու ձեւ է համարուել, եւ աղքատը ընկերային ոլորտում նոյնացուել է կենսաբանական առումով մահացածներին[41]:

---

[37] Գ. Շերենց, *Վանայ սազ, երկրորդ մաս*, տպ. Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1899, էջ 14:
[38] Սիմոնեան-Մելիքեան, էջ 87:
[39] Բդոյեան, էջ 140:
[40] Սիմոնեան-Մելիքեան, էջ 87-88:
[41] Токарев, էջ 49:

Սրանով փաստւում է այն, որ եթէ գարնանային ծէսերում երկու սեռերի միջեւ տեղի ունեցող մրցակցային երկիակադրութիւնում կան սեռային տարրեր, ապա ձմեռային ծէսերում՝ ընդհակառակը, ընդգծւում է մահուան գաղափարը, մահացածների բացակայութիւնը[42], որից յետոյ պէտք է գայ նորի սկիզբը:

Տուեալ տօնը ծիսական ուտեստի համակարգին համապատասխանեցնելով խաղի մասնակիցները հաւաքում էին տարբեր մթերքներ, հիմնականում հացահատիկ կամ հացամթերքի պատրաստի տարբեր տեսակներ, ընդեղէն եւն.: Խնդրուող (պահանջուող) մթերքներին, նուիրաբերութիւններին վերագրուել են տարբեր գործառոյթներ՝ պէտք է նպաստէին գալիք տարուայ պտղաբերութեանը, առատութեանը, սերնդաճին, բժշկէին: Այսպէս, օրինակ ձուն համարուելով վերածննդի խորհրդանիշ, կենտրոնական դեր ունէր գարնանային ծէսերում (Ծաղկազարդ, Զատիկ, Համբարձում, Վարդավառ[43]), իսկ աւելի քիչ էր յիշատակւում ձմեռային խաղերգերում (Ամանոր, Ծնունդ[44]): Նոյն գարնանային ծիսախաղերում կան նաեւ երկկողմ նուիրաբերութիւնների նկարագրութիւններ՝ խմբի եւ հիւրընկալողի միջեւ (օր. Ծաղկազարդին ձուի դիմաց նուիրում էին օրհնուած ուռենու ճիւղեր, Համբարձման տօնին՝ ծաղիկների փոքրիկ փունջ) իբր՝ փոխադարձելով բարի ցանկութիւնները:

Ժողովրդական տօները տօնւում էին հասարակայնօրէն, եւ դրանցում ներառուած էին բոլորը, հենց այս խմբային ձեւերով ցոյց էր տրւում, որ ընտանիքը համայնքից եւ իր անդամներից առանձնացուած չէ եւ ունի որոշակի պարտաւորութիւններ հասարակութեան առջեւ[45]:

Նուէրների խմբային հաւաքումը եւ հաւասար բաժանումը բնորոշ է եղել յատկապէս նախնադարեան հասարակութեանը[46]: Իսկ նուիրատուութիւնը եւրոպական ժողովուրդների մօտ օրացուցային ծիսակարգում նշանակում է ոչ միայն նիւթական բարօրութիւն, այլեւ փոխադարձ բարի քայլ, լաւ տրամադրուածութիւն եւ յարաբերութիւններ. նուիրաբերութիւնը ծնում է ընկերութիւն[47]: Այսպիսի նուիրաբերութիւնները կարծես թէ հասարակութեան լաւ յարաբերութիւնների նիւթականացումն ու ապացոյցն էին:

ԽԱՂԵՐԳԻ ՍԿԻԶԲ ԵՒ ԱՒԱՐՏ

Ծիսական շրջայց-խաղերը, որպէս կանոն, հանգուցալուծւում են օրհնանք-անէծք պարունակող բանաձեւերով: Սա եւս կարելի է համարել խաղերգերի հիմնական ընդհանրական գիծ:

---

[42] Նոյն, էջ 49:
[43] Բդոյեան, էջ 153-55, 164:
[44] Օդաբաշեան, էջ 69:
[45] Токарев, էջ 177:
[46] Նոյն, 176:
[47] Նոյն, էջ 178:

Շրջայց-խաղերի մասնակիցները իրենց պահանջած նուէրները ստանալիս իբրեւ գոհունակութիւն հնչեցնում էին օրհնանքներ: Օրհնութիւնների հիմնական հասցէատէրերը ընտանիքի անդամներն են, տան երիտասարդները, մեծմասամբ նորապսակները՝ որպէս սերնդաճի երաշխաւորներ, արտադրական-տնտեսական կայունութեան կարեւոր բաղադրիչները, բնութեան երեւոյթները[48]: Խնդրած պարգեւների դիմաց մերժում ստանալու պարագայում խաղերի մասնակիցները անիծում էին տան տէրերին: Անէծքները նոյնպէս ուղղուած էին արտադրական-տնտեսական կայունութեան կարեւոր բաղադրիչներին եւ երիտասարդներին, որոնցով եւ պէտք է խոչընդոտուէին ընտանիքի ապագայ յաջողութիւնները[49]: Օրինակ, Ծաղկազարդին՝ «Կարկաչա» խաղի ժամանակ շրջող խմբի խաղերգում ասւում է.

Ով որ չտայ իմ երկու ձուն,
Մուկն ու կատուն իրանց թթուն.
Ով որ կը տայ իմ երկու ձուն՝
Աստուած պահէ իր փեսացուն[50]:

Հետաքրքրական է, որ ի տարբերութիւն այլ տօների ժամանակ երգուող խաղերգերի, գրոյթների աւարտին շատ, յաճախ իրենց բաժին նուիրաբերութիւնը չստանալու դէպքում հնչեցուող արգելակող նախազգուշացում-սպառնալիք անէծքների, նոր տարուայ երգերում ունենք տարբերակ՝ երբ խաղի ցանկացած ելքի դէպքում հնչեցւում է օրհնութիւն-բարեմաղթանք. «…թէ կու տաք՝ դուք շէն կենաք, թէ չէք իտար՝ դուք շէն կենաք»[51], ի տարբերութիւն այլ տօների՝ « …ով ուր չի տայ՝ հաւերուն տոտոզը չորնա»[52], « …վեւ օր տայ՝ շէն շէնայ, վեւ օր չտայ՝ չոր չորանայ», «…ով տայ՝ զիզի բարձին նստի, ով որ չի տայ՝ չոր քարին նստի»[53] …: Թէկուզեւ մերժուելու դէպքում օրհնութիւն տալու երեւոյթը, թերեւս կապւում է մաքրագործման գաղափարի, նոր տարին հաշտ ու բարի դիմաւորելու հետ եւ «հիմնւում է խօսքի կամ գործողութեան հմայական զօրութեան հաւատալիքի վրայ»[54]: Այսպէս, հնից դէպի նոր անցումային փուլը պէտք է կանխորոշէր գալիքը:

Վաղնջական հասարակութիւնը խորապէս համոզուած էր, որ լաւ անցկացուած ամէն հանդիսութիւն, յաղթանակած ամէն խաղի կամ մրցութեան հետ է կապւում խմբի բարօրութեան ձեռքբերումը[55]: «*Հոհաբերու-*

---

[48] Բդոյեան, էջ 140-63:
[49] Նոյն:
[50] Նոյն, էջ 155:
[51] Նոյն, էջ 143:
[52] Նոյն, էջ 140:
[53] Նոյն, էջ 153
[54] Օդաբաշեան, էջ 9:
[55] Հայզինգա, էջ 83:

թիւնները կամ սրբազան պարերը յաջողուել են. հիմա ամէն բան լաւ է, վերին ուժերը մեզ հետ են. աշխարհի կարգը պահպանուած է. տիեզերական եւ սոցիալական բարօրութիւնը մեր եւ իւրայինների համար ապահովուած է»[56]: Եւ այս գործընթացը որակւում է իբրեւ պաշտամունքային պարզունակ արարողութիւն[57]: Այս խաղերի պաշտամունքային սկիզբը արտայայտւում է նաեւ հենց այնտեղ, որ խաղի մասնակիցները հաւատում են խաղի ողջ գործընթացի օգտակարութեանն ու անհրաժեշտութեանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ ժողովրդական տօներն անցկացուել են բազմաթիւ ծիսախաղերով, որոնք պէտք է նպաստէին պտղաբերութեանը եւ բերքի հասունացմանը: Ծիսախաղերը ամփոփում են մարդու ընկերային գործունէութեան երկու ձեւերը՝ ծէսն ու խաղը. մարդիկ կատարում են ծիսական գործողութիւններ՝ աներկբայ հաւատալով դրանց ուժին: Այդ ամէնը արւում է խաղային ձեւով՝ միաժամանակ որեւէ կերպ կասկածի տակ չդնելով գործողութիւնների լրջութիւնը: Շրջերթի եղանակով իրականացուող բազմազան խաղերը առաջին հայեացքից կարող են տարբերուել միմեանցից կատարման կարգով, որոշ նրբերանգներով: Այսուհանդերձ բազմաթիւ ձեւաբանական, կառուցուածքային եւ իմաստային ընդհանրութիւններ փաստում են, որ մասնակի տարբերութիւններով հանդերձ՝ դրանք սնւում են եւ խարսխուած են գլխաւորապէս գաղափարական միքանի առանցքի շուրջ, ունեն նոյն կամ գրեթէ նոյնական հիմք՝ պահպանելով վաղնջական ծիսական գործողութիւնները:

THE IDEOLOGICAL BASIS AND COMMONALITIES OF FESTIVE TRAVELING GAMES

(Summary)

SHUSHANIK HOVHANNISYAN (shushanikhovhannisyan3@gmail.com)

Based on ethnographic and folklore sources, the paper focuses on the features and similarities of ~~the~~ festive traveling games. The author clarifies the semantic continuity of the holiday cycle and the interrelationships of the games with each other.

At first glance, these games may differ in order of performance, with some nuances, but several ideological, structural-semantic similarities show that, notwithstanding partial differences, they are nourished and anchored mainly around several ideological axes, have the same or an almost identical archaic basis and are remnants of archaic ritual activities.

[56] Հայզինգա, էջ 83:

[57] Նոյն, էջ 83: